

անոր տարածութեան մասին որոշ տեղեկութիւն մը տուած է: Իր գրածէն հետեւցնելով Մասովայէն 12 օրուան ճամբայ ներս՝ Դիվարպատ անուն քաղաքն էր երկիրին սահմանագլուխը (տող 32—35):

Բուն երկիրին տարածութեան վրայ գէթ աղօտ գաղափար մը կու տայ Դիվարպատէն մինչև Դուսպիս՝ երկիրին մայրաքաղաքը՝ 30 օրուան ճամբայ նշանակելով (34—37), իսկ մայրաքաղաքէն դէպի հիւսիս-արեւելեան սահման (Չանկչաղայ) 20 օրուան ճամբայ (184):

Այս կերպով մայրաքաղաքէն դէպի հիւսիս-արեւելք և դէպի հիւսիս-արեւմուտք՝ երկիրին տարածութիւնը վերիվերոյ ունեցած կ'ըլլանք, բայց բացարձակապէս անգէտ կը մնանք երկիրին հարաւային սահմաններուն:

Յովհաննէս Թիւթիւնճի առանց պատասխանատուութեան միայն տեղ մը կ'ըսէ. «Երկրի լայնութիւնն ԱՍԵՆ 5 ամսէն ճամբայ է» (54—55). Ինչ որ որոշ գաղափար մը կու տայ թէ Հապէշները իրենց երկիրին ինչ տարածութիւն կու տային, և շրջակայ կարգ մը երկիրներ ալ իրենց կը սեփականէին:

ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ, ԼԵՌՆԵՐ ԵՒ ԳԵՏԵՐ. — Յովհաննէս Թիւթիւնճի տուած է իր ճամբուն վրայ գտնուած երկիրներուն Ֆիլիքական նկարագիրին վերայ կարգ մը տեղեկութիւններ, որոնք շատ հարեւանցի հանգամանք մը ունին. սակայն կարեւոր են: Այսպէս, Եգիպտոսի Արեւելեան անապատը կը ներկայացնէ՝ ըսելով թէ ո՛չ ջուր կայ հոն և ոչ բոյս, այլ միայն կարմիր աւազ (10—11):

Վերադարձին կ'անցնի Արեւմտեան անապատէն, ուր դարձեալ ո՛չ բոյս կը տեսնէ և ոչ ծառ, այլ